



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

# Firmly

Յուլիոս Աֆանասի  
առաջ գարյան և  
աշխատ պատճեն այլուր  
պատճեն պատճեն այլուր

613.6  
P-92



Հ.Ս.Հ.  
ԱՌԺՈՂԿՈՄԱՏ

Խ 8 ԱԾՆ-ԼԱԽ ԴՐՁԴԱԾՆ Խ 8

Բժ. Գ. ՑԱ. ԲՐՈՒԿ

ԿՈԼԻՈԶՆԻԿԻ ԱՌՈՂ-  
ԶՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՇ-  
ԽԱՏԱՆՔԻ ՊԱՀՏՈՒ-  
ՆՈՒԹՅՈՒՆ



ԿԱԶՄԵՑ ԲԺ. Ա. ՂԱԶՄՅԱՆ

613 · 6  
F - 92

• ՊԵՏՐՈՎԱ 31  
= ՅԱՐԵՎԱՆ =

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԽԱՐԱԿԱ ԽԱՅԱ ՀԱ

ԽԱՐԱԿԱ ԽԱՅԱ ՀԱ

-ՔՈՌԱ ԴԻՎԱՅՈՒՄ  
-ԵԱ ԱԲՑ ՏԱՑԵԼՈՅ  
ԱՊՇԵՄԱՐ ԻՎԱՄՑԱԿ  
ՖՐԱՑԵԼՈՅ

ԻՆՍԻՏՈՒ  
ՏԱՑԵԼՈՅ

Ի ԽԱՅԱ

4322

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

613-6

Բ-92

ԲԺ. Գ. ՅԱ. ԲՐՈՒԿ

1 July C  
20 JUL 2010

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ԿՈԼԽՈԶՆԻԿԻ ԱՌՈՂՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Ե. Ա. Սեմաշելոյի յեվ հեղինակի  
հառաջարաններով)

Կազմեց Բժ. Ա. Գ. ԶՈՐՅԱՆ

Պետական հրատարակչություն Յերևան 1931

06.03.2013



3574 - 82

Հ. 1478.

Գրառեպիլար № 5925 (բ)

Տերաժ 4000

Պետրատի առաջին տպարան Վաղարշապատում:

Պատվեր № 14:

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Բժիշկ Գ. Յա. Բրուկի ներկա գրքույկը վոչ միայն դալիս և բավարարելու գյուղի աշխատավորության, հատկապես կոլխոզնիկների առողջապահական անհրաժեշտ ու հրամայական կարիքները, այլև իր պարզ վոճակությունը բազմազանությամբ կարող ել լավագույն ձեռնարկներից մեկը հանդիսանալ լայն աշխատավոր մասսաների ձեռքում:

«Կոլխոզնիկի առողջօւթյան ու աժամանեթի պահպանության» նվիրած սույն գրքույկը հավասարապես ոգտակար կարող ել հանդիսանալ գյուղական շրջաններում գործողների համար, լինեն նրանք բժիշկներ, ուսուցիչ-ուսուցչներ յեվ այլն:

Դրույկի մեջ շոշափված բազմաթիվ հաթօները, վորոնք մեծապես գործնական ընույթ են կրում, կարող են լավագույն զրույցների նյութ ծառայել յեվ լայնորեն ոգտագործվել մասսաների կուլտ-կրթական մակարդակը բարձրացնելու գործում:

Ընկ. Բրուկի ներկա գրքույկն, ինչպես հին այլանդակ հանկացողությունները վոճաչացնելու յեվ նոր կենցաղը կազմակերպելու գործում, նմանապես յեվ կուլտուրական հեղափոխության ասպարիզում լավագույն ուժանդակներից մեկը պիտի համարել:

Սույն գրքույկը, հնարավորին չափ, մենք հարմարեցրել ենք մեր իրականության, տեղ-տեղ ել փոփոխություններ ու կրնատումներ արել, բայց հիմնականում մնացել ենք բնագրին հարազատ:

ԲԺ. Ա ԴԱԶԱՐՑԱՆ

15/8—30 թ.  
Յերեւան.

## ԽՄԲԱԳՐԻ ՀԱՌԱԶԱԲԱՆԸ

Ընկ. Քրուկի գրքույկը նվիրված ե ամենահրատասրու կարեվոր հարցի լուսաբանության:

Կոմունիստական կուսակցության Կենտկոմի յեկառավարության վորոշման համաձայն կոլխոզ շարժումը գնալով զարգանում ե. Այժմվանից արդեռ կոլտնտեսությունները գառնում են որինակելի իրականացնողները գյուղատնտեսական լավագույն ծեփերի. նրանի սկսել են ցույց տալ իրենց շրջապատի գյուղացիության գյուղատնտեսության յեկ նորագույն կուլտուրայի նոր ճանապարհները:

Բացի այդ՝ կոլտնտեսություններում աշխատողները պարտավոր են ցույց տալ գյուղացիության նայելով գեղի առողջ կանքը տանող ճանապարհները, քանի վոր առանց մաքուր, փայլուն ու առողջ կյանքի՝ չկակուլուրա, իսկ առանց գյուղացիական աշխատավորության՝ չի կարող լինել նայելով գյուղատնտեսության վերելք:

Յեթե առողջությունը կարեվոր ե յուրաքանչյուր աշխատավորի ընդհանրապես, այն ժամանակ նա աւլիք թանգ ե լինելու նրանց համար, ովքեր պարագում են գյուղատնտեսությամբ: Հողագործական աշխատանքը դժվարացույնն ե աշխատանքների մեջ՝ գյուղատնտեսության շրջանակը, վորքան ել նրանք:

Յեթեվացնում են գյուղատնտեսական աշխատանքները, այնուամենայնիվ գյուղատնտեսական աշխատանքը պահանջում ե մեծ ու լարված ուժեր, հետեւ վագես յեկ մեծ առողջություն, քանի, որինակի համար, այդ պահանջում ե վարչական ծառայությունը կամ դազգյահի բանվորի յեկ բանվորուհու աշխատանքը. Յերբենն աշխատանքի շրջանում տեղի ունեցող հիվանդությունը տնտեսությունը հետաձգում ե մի ամբողջ տարով:

Ահա թե ինչու գյուղացիությունը պարտավոր և հատկապես ուշադիր վերաբերվել դեպի իր աշխատողնակությունը, հետեւվագես դեպի իր առողջությունը. Ահա թե ինչու կոլխոզներն իրենց որինակով պարտավոր են իրենց շրջապատի ազգաբնակչությանն ուսուցել, թե ինչպես պիտի պաշտպանել առողջությունը:

Վոր այս գրքույկն ոգտակար ե, զրա մասին վոչվոր վեճ չի հարուցի: Բայց վոր հավանողեն կլինեն առարկողներ, թե՝ «զյուրին ե բժիշկներին զրել, բայց ի՞նչպես մենք պահպանենք այդ կանոնները, յերբ աղքատ ենք յեկ ծանր կյանք ունենք»:

Նման մեղադրանքը ճիշտ չի լինիլ: Հեղինակը, յերբ տալիս ե իր խորհուրդները, նա կտրված չե մեղավոր յերկրից. ընդհակառակը, նա աշխատում ե փնտռել այնպիսի ցուցմունքներ, վորոնց հնարավոր են իրականացնել նույնիսկ փոքր կոլխոզներում: Անշուշտ, աղքատությունը մեծ արգելք ե առողջապահական կանոնների գործադրության համար. մաքուր հագուստը լավ ե ունենալ, բայց աղքատությունը թույլ չի տալիս ունենալ: Լավ ե կանոնավոր մնվել, բայց աղ-

բատ ժամանակ՝ «կեր՝ ինչ վոր տալիս են»։ Իհարկեալ պատությունը շատ բան ե խանգարում։

Բայց հաճախ աղքատության վրա բարձում են ազիսն, բան թե նա իսկապես մեղավոր ե։ Կոլխոզների մեջ կան այնպիսիները, ինչպես ընդհանրապես գյուղացիների, վորոնք միշեվնույն արժանիքներն ունեն։ այնինչ մենք տեսնում ենք, վոր նրանցից մեկն ապրում ե մարուր, վայելուչ, իսկ մյուսը՝ կեղտու, միջատների մեջ թաղված։ Մեկը հին շորեր ունի, բայց մաքուր են ու կարկատած, իսկ մյուսի հագուստը նոր ե, բայց աղտոտ ու ծակծկուված։ Մեկը խմբչների վրա յե ծախսում ամբողջ աշխատավարձը յել ապրում ե աղքատ։ Այնպես վոր, յերբ ամեն ինչ աղքատության վրա յեն բարձում, պիտի ուշադիր ինքնեւ, արդյոք աղքատությունն ե մեղավոր, թե՞ ինքն աղքատը։

Ավելին դեռ, բանի մարդ չունեվոր ե, նա ավելի խիս պիտի լինի խորհուրդների կառարման մեջ։ Պոռնէ ցույց են տրած այս գետում։

Կուլակը կարող ե հիվանդանալ, նրա համար կարող ե բատրակն աշխատել. իսկ աղքատը պիտի իր նույն միայն իր վրա դնի, այսինքն՝ իր առողջության պատճել իր նոր հագուստն ու փչացնել, նա կգնի վորը դժվարությամբ ե ծեռք ըերեւ։ Յեկ այսպիս զգաստ պիտի լինել ամեն բանի մեջ, գույքան, մարդ այնքան նա հեռու պիտի մնա խմբներից, նա ավելի մածելու իր առողջապահության մասին։

6

Մի գուցե վումանք ասեն. «այդ բոլորը նիշտ ե, բայց յեկ այնպես նեղինակը ծայրահեղության մեջ ե ընկնում. նա խորհուրդ ե տալիս, վոր ատամներն անգամ մարբել չոթքով. դա արդեն չափազանց ե»։

Բնակ այդպես չե. այսուղե չկա ծայրահեղություն. նախ աւենք, վոր առողջ ատամներ ունենալն ամեն նեղին շռայլություն չե. Յերբ ատամներն առողջ են, նշանակում ե մարդ կարող ե լավ մնվել, որգանիզմին կանոնավոր նյութ մատակարարել, լավ աշխատել իսկ յերբ մարդու բերանի ատամները փոտած են, նա վատ ուսող կլինի, հետեւվապես յեկ վատ աշխատող։

Հարցնում ենք, վո՞րն ե լավը, մի քանի կրպեկ վատնել, զնել ատամների չոթք յեկ մաքուր ու առողջ պահել ատամները, թե՞ ատամնացավից ու ատամների փոտումից հեթիմների դոները մաշել յեկ մեկը մյուսի հետեւից արմատից հանել. Հատկապես սա վերաբերում ե յերեխաներին. վորը հասակից սովորցրեք յերեխաներին հետեւել ու մաքուր պահել իրենց ատամները յեկ դուք շատ բան արած կլիներ նրանց առողջության համար՝ իրենց ամբողջ կյանքում։

Ահա թե ինչ ե նշանակում այնպիսի մի հասարակ բան, ինչպես ե ատամի չոթքը։

Զգենոր ե արհամարհանքով վերաբերվել նույնիսկ ամենաչնչին խորհուրդներին. Կլանքի մեջ նրանք պետքական են։

Արդարացի յե ընկ. Բրուկը, յերբ նա կոլխոզնիկներին համոզում ե, թե ուշադրությամբ պետք ե կարգալ այս գրքույնը, այն եւ կրկնակի անգամ յեկ ճրշտությամբ կատարել նրա մեջ որված խորհուրդները։

Ով լավ սովորի այդ խորհուրդները, նա շնորհա-

7

կալությամբ կնիշի հեղինակին, քանի վոր դժբախտ  
դեպքերը քիչ չեն կուտնատեսություններում,

Հարկավոր ե, վոր այս գրքույկը լայնորեն տարած-  
վի կոլլագներում, վորպեսզի նրա խորհուրդները լայ-  
նորեն իրականանան կյանքում:

Այն ժամանակ կոլլագներն իսկապես կհանդիսա-  
նան նոր, մաքուր, պայծառ, առողջու ու ուրախ կյան-  
քի ոջախներ.

### Ն. ՄԵՄԱՇԿՈ

### ՀԵՂԻՆԱԿԻ ՆԱԽԱԲԱՆԸ

Մենք կանգնած ենք կուտուրական հեղափոխու-  
թյան առաջ: Մենք պիտի մեր հետամնաց յերկիրը  
դարձնենք առաջադեմ. դրա համար շինելու յենք բազ-  
մաթիվ խոշոր գործունակ ֆաբրիկաներ ու գործարան-  
ներ, փորելու յենք յերկրի սրտի մեջ շախտաներ, կանգ-  
նեցնելու յենք բազմաթիվ ելեկտրոկայաններ յեվ  
նրանցով լուսավորելու յենք մեր յերկիրը: Մենք  
պիտի բարձրացնենք մեր գաշտերի բերքատվությու-  
նը, վոռոգելու յենք անջրտի հողերը յեվ չորացնելու  
ճահիճները. ընդարձակելու յենք ցանքսերը յեվ տա-  
լու յենք մեր արդյունաբերության հում նյութ, քա-  
ղաքներին՝ հաց յեվ զյուղատնտեսական մթերքներ,  
իսկ զյուղին տալու յենք մերենաներ, պարարտանյու-  
թեր, հագուստեղեն, ամանեղեն յեվ տնալին այլ գոր-  
ծածական իրեր.

Պիտի ընդունենք, վոր մեր առաջ կանգնած են շատ  
մեծ հարցեր: Նրանց կարելի յե իրականացնել միայն  
այն դեպքում, յերբ լարենք մեր բովանդակ ուժերը:  
Դյուզը կարող ե իրականացնել իր վրա դրված  
պարտականությունը. յեթե միայն նա անցնի հասա-  
րակական հողամշակման ծեփին յեվ կարողանա լրիվ  
ոգտագործել արակտորները, գյուղատնտեսական այլ  
մերենաները, հողի պարարտացումը յեվ այլն: Իսկ  
դա ննարավոր ե միայն կոլեկտիվ տնտեսությամբ,  
խորհրդային յեվ կոլտնտեսություններում:

Դրա համար ել կոլտնտեսությունների վրա մենք նայում ենք վորպես առաջադեմ տնտեսությունների, իսկ կոլտողներին՝ ինչպես առաջատար տնտեսությունների: Կոլտնտեսություններն որինակելի յեն մինում շրջապատի ազգաբնակչության համար:

Կուլտուրական նեղափոխության գործում կոլտընտեսություններն ունենալու յեն շատ խոշոր նշանակություն: Կոլտողներին լինելու յեն գրագետ յեկ զարգացած շրջապատի ազգաբնակչությունից: Նրանք որինակելի յեն լինելու վոչ միայն տնտեսության մեջ, այլ յեկ առողջության պաշտպանության գործում:

Խորհրդային իշխանությունը մեծ նշանակություն է տալիս կոլտողներին առողջության գործին: Կոլտնտեսություններում բացվելու յեն մսուրներ, հանգրատամահճականներ, առաջին ոգնության դեղարդյուններ:

Սակայն դեղաանների յեկ նիվանդանոցների աշխատանքները դեռ բավական չեն, վորպեսզի առողջացնեալ նայել, վոր մարդիկ իմանան պահպանել իրենց առողջությունը, կարողանան կանխել նիվանդությունները: Բայց դա հնարավոր է միայն այն դեպքում, յեթե յուրաքանչյուր կոլտողների իմանա, թե ինչպես պիտի պաշտպանի իր առողջությունը: Դրա համար ել կարեւոր է, վոր կոլտողների ծեռքը տանք առողջության վերաբերյալ շատ գրեթե: Հարկավոր է, վոր կոլտողներին այդ գրեթե կարդան յեկ գործադրեն:

Անշուշտ, բացի ոգտակար գրեթեց, հարկավոր են հայեկ սանիտարական լուսավորության այլ միջոց-

ներ, ինչպես են՝ բժշկական զեկույցներ ու զրույցներ, նկարներ ու պլակատներ: Ակումբներում պիտի կազմակերպել առողջապահական անկյուններ, ու ցույց պիտի տրվեն, թե ինչպես պիտի կանոնավոր ապրել, ինչ պակասություններ կան այս կամ այն կոլտնտեսության մեջ, ինչ հիվանդություններ են հայտնաբերվել վերջին ժամանակները յեկ ինչ միջոցներ պիտի ծեռնարկել այդ հիվանդությունները վերացնելու համար յեկ այլն: Այս ամենը բնավ չեն պահանջում գրեթերի արժեքը, վորոնք մեզանում բիչ են յեկ վորոնց նկատմամբ մեծ պահանջ կա:

Այս գրքի նպատակն է ցույց տալ, թե ինչպես պիտի խուսափել հիվանդություններից յեկ ինչպիսի շտապ ողնություն պիտի ցույց տալ դժբախտ գեպքերում: Ուրիշ գրքերի հետ միասին այս գիրքն յևս ողնելու յե ընթերցողին, հարստացնելու յե նրա գիտության պաշարը յեկ տալիս ե մի շարք խորհուրդներ:

Սույն գիրքը զրված է զրույցների ձեվով, լավ կլինի, վոր կարդացվի հավաքական յեղանակով, այն ժամանակ ոյուրին կլինի դժվար տեղեր իրար հասկացներ Յանկալի կլինիներ նույնպես, վոր մի բանի կարեւոր գլուխներ կարդացվելին կրկնակի անգամ: այն ժամանակ գիրքը լավ կլուրացվի:

Յանկալի յե, վոր գրքիս ընթերցողները գրեթեն իրենց ոիտողությունները, թե վորքան նա ոգտակար է, վորքան լավ է կամ վատ, ինչ վուփոխության պիտի յենթարկել յեկ ինչ լրացնել: Ընթերցողի նման ցուցմունքները շատ ոգտակար կլինին յեկ կընդունի վեն շնորհակալությամբ:

ԲԺ. ԲՐՈՒԻԿ

ԳԵՂՏԵՄԵՐԵՐ—ՓԵՏՐՈՎԱՐ.

1928—29

ՄՊՈՒԼՎԱ

## Զ Բ Ա Խ Յ Յ Ե Ւ Ճ Ի Ն

Ի՞նչ բան ե ՀիվանդութՅունը. Ինչի՞ց ԿԱՐՈՂ, Ե  
ՄԱՐԴԸ ՀիվանդԱՆԱԼ,

Մարդու համար ամենից թանգն առողջությունն  
ե. Յեթե մարդ առողջ ե, նա կարող ե աշխատել և  
կերակրել թե իրեն և թե ընտանիքը. Այլ բան ե,  
յերբ նա հիվանդանում ե. Հիվանդությունը թուլաց-  
նում է մարդու ուժերը և նա չի կարող աշխատել  
այնպես, ինչպես աշխատում եր առողջ ժամանակ.  
յերեմն ել կարող ե բոլորովին չաշխատել և նույնիսկ  
անկողին ընկնել. Յեզ բնական ե, հիվանդ մարդը չի  
կարող վոչ իրեն կերակրել և վոչ ել իր ընտանիքը.  
Ընդհակառակը, շրջապատի մարդիկն են կերակրելու  
նրան. Բայց միայն կերակրելը չի, հիվանդ մարդուն  
հարկավոր ե և խնամք. Հիվանդ մարդը շրջապատի  
բեռն ե. Ճիշտ ե, հաճախ այդ բանը հիվանդի յերե-  
սին չեն ասիլ, անհարմար ե, բայց կարող ե պատա-  
հել, վոր ասեն. ամենքն ել զրազված են, շատ ան-  
դամ հիվանդով զրազվելու վոչ ժամանակ կա և վոչ ել  
ցանկություն.

Այս, հիվանդը շրջապատի համար բեռն ե: Բացի այդ,  
յերեմն ել հիվանդը շրջապատի համար վատնգավոր ե.  
զարակիչ հիվանդությունները քիչ չեն. նրանք շատ  
վտանգավոր են և շուտ ել կպչող. Յեթե մարդս հի-

վանդ և այդ հիվանդություններով, նա կարող է ուրիշ շատ մարդկանց թշվառության պատճառ դառնալ:

Հիվանդությունը հաճախ տանջանքներ և պատճառում մարդ խիստ ցավեր և զգում, յերբեմն գուսում և ուրիշներին անհանգստացնում: Իր նվազներով խանգարում է նրանց քունը, հաճգիսան ու խաղաղ ալբուստը: Նշանակում է և հիվանդի համար և վատ, և ուրիշների: Նրանից քաղցրություն չեն տեսնում:

Յեզ ալսպես, մարդուս համար ամենից թանգն առջությունն է: Աչքիդ լուսի չափ պիտի պահպանես առողջությունդ: Դժբախտաբար մարդ հաճախ անհոգ և քիչ և մտածում հիվանդության մասին: Միայն հիվանդանալուց հետո իւ հասկանում, թե ինչան շատ և կորցրել այդ ժամանակ սկսում է խնամք տանել իր առողջության վրա: Ինչպես առակն և ասում: «Ինչ ունես՝ չեսպահպանում, իսկ վերջում՝ կորցրածի վրա իս լացում»:

Վորպեսզի առողջությունդ պահպանես, պիտի անչորությունից ձեռք քաշես: Պիտի շարունակ առողջության խնամք տանել, պահպանել և ամրապնդել: Չեզ վոր ասված է: — «Հիվանդությունը փթերով մըտե, մսխալներով դուրս գալիս»: Այդ նշանակում հում է, մսխալներով դուրս գալիս: Այդ նշանակում վանդությունը միշտ ել չի բռնժգում: Հիվանդություն կա, վորից առբիներով պիտի բռնժգել, ինչպես, որինակ, սիֆիլիսը: Մինչդեռ նրանով հիվանդներ գյուրին եւ դրա համար ել խիստ զգուշ պիտի


Միայն իմացությունն ու զգուշությունը մեզ կարող են կրանքում ոգնել: Միայն իմացությունն ել քիչ է, շատերը գիտեն, թե ինչպիսի վասներ են պատճա-

ռում անմաքուր ջուրը, թութունը կամ թե ողին, բայց նորից շարունակում են գործածել պարզ ե, վոր պիեաք և նաև զգուշություն: Միայն այդ դեպքում կարելի լի հուսալ, վոր չես հիվանդանալ:

Այն գիտությունը, վորը պաշտպանում է մարդու առողջությունը և գիտե, թե ինչպես կարելի լի բռնժել հիվանդին, կոչվում է բժշկություն: Խակ այն մարդիկ, վորոնք ուսել են այդ գիտությունը, կոչվում են բժիշկներ: Հիվանդության դեպքում պիտի դիմել բըժիշկների ոզնության, նրանցից պիտի խորհուրդ հարցնել, վորպեսզի կարելի լինի զգուշանալ հիվանդություններից: Բժշկության մասին տանք ալստեղ տարրական գիտելիքները, ափելի մանրամասն տեղեկությունները դուք կարող եք ստանալ այլ գրքերից, կամ բժիշկներին հարց ու փորձ անելով:

Մարդու մարմինը շատ բարդ կազմություն ունի: Մարդու կմախքը կազմված է բազմաթիվ գոսկորներից (251), վորոնց վրա ամրացած են մեր մկանները: Գանգի մեջ տեղափորված ե մեր ուղեղը: Կրծքի վանդակում՝ թոքերն ու սիրտը, վորի մեջ՝ ստամոքսը, աղիքները, լյարդը և շատ ուրիշ գործարաններ: Մարդըս ունի աչքեր, ականջներ, բերան, քիթ և այլն: Մեր ամբողջ մարմինը պատած է մաշկով և մազերով: Մարդու մարմնի մեջ գտնվում են բազմաթիվ իոզովակներ, վորոնց միջով հոսում ե արյունը, և սպիտակ թելանման շատ ներվեր:

Մարդու մարմնի ըոլոր գործարաններն աշխատում են. և շնորհիվ նրանց գործունեյության՝ ապրում ե մարդը: Միրտը զարկում է, մղում և արյունը մեր մարմնի ըոլոր մասերը և նորից հավաքում ամեն կող-



Նկ. 1. Սարկու կմախըլը.

16

Ճերից: Թոքերով շընչում ենք. ստամոքսն ու աղիքները մարսում են կերակուրը, մաշկը մարմինը պաշտպանում և ցրտից, տաքից և ամեն տեսակ վտանգներից: Լրիկ առողջության համար անհրաժեշտ են, վորմեր բոլոր որդանները գործեն համաձայնեցրված և համերաշխ, նրանց աշխատանքը լինի բավարար, բայց վոչ չափազանց: Մեր միտքը հասկանալի գարձնելու համար բերենք յերկու որինակ:

ա) Հալտնի յե, վորմարդու սիրտը մեկ րոպեյում զարկում և 70—80 անգամ: Ալտի գործունելությունը շատ կարենք ե. չե վորմա, ինչպես ասացինք, արյունը մղում է մարմինի բոլոր մասերը և նորից հավաքում է ամեն կողմից: Լավ կլինի, արգլոք, յեր-



2

3574-82



17

մարդու սիրտը զարկե, ասենք թէ, 35—40 տնդամ,  
փխանակ 70—80-ի: Ինարկե, վոչ. արդպիսի մարդն  
առողջ լինել չի կարող. նա հիվանդ կլինի: Նրա մարդ-  
նի մեջ արտունը կնուի չափազանց գանդաղ և նրա  
գործարանները չեն աշխատիլ այնպես, ինչպես ահ-  
հարժեշտ ե:

Բայց մի գուցե լավ կլինի, յեթե գորես մեկի սիրտը  
զարկե մեկ րոպեում 150 անգամ: Գուցե այդ մարդու  
մարմնի մեջ արլունը հոսե շատ արագ և նրա գոր-  
ծարանները ստանան ավելի շատ արյուն: Վոչ. բա-  
նից գուրս և դալիս, վոր դա ևս շատ վատ ե: Այդ-  
պիսի մարդը կարող ե սրտի բարախում ունենալ. նա  
միանգամայն անընդունակ կլինի աշխատանքի և կլի-

բ) Մի ուրիշ օրինակ. ստամոքսի մեջ պատրաստ-  
վում ե հյութ, իսկ արդ հյութի մեջ զանգում են զա-  
նազան նյութեր, վորոնք մարսում են կերակուրը:  
Այդ հյութից կարեորն ե ազատին թթվուտը: Առողջ  
մարդու ստամոքսն արտադրում ե այդ թթվուտն աչն-  
քան, վորքան պետք ե կերակուրը մարսելու համար:  
Յենթերենք, վոր ստամոքսն այդ նյութին արտադր-  
վիլ, կամ թե չե՝ կմարսվի վատ, քան հարկավոր ե:  
Առողջ, այլ՝ հիվանդ:

Կարող ե պատահել և ալսպիս, վոր ստամոքսն ա-  
զալին թթվուտ արտադրե ավելի, քան այդ հարկա-  
ևս մարդը կարող ե հիվանդանալ: Նա կարող ե նույն-  
իսկ ստամոքսի խոց ունենալ:

Նշանակում ե՝ լավ չե, յեթե մարդու մարմնի գոր-  
ծարանները թույլ են գործում, քան այդ պետք ե.  
վատ ե, յերբ նրանք աշխատում են ավելի, քան այդ  
հարկավոր ե: Յերկու դեպքում ել մարդ կարող ե հի-  
վանդանալ:

Հիվանդությունն առաջանում ե, յերբ մարդու մարմ-  
նի գործարանների աշխատանքը չափազանց թուլա-  
նում ե կամ ուժեղանում: Յերկուն ել վատ են:

## ԻՆՉԻՐ Ե ԱՌԱՋԱՆՈՒԻՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

### 1. Դիբախտ պատճեար

Ալժմ աշխատենք պարզե՞լ թե ինչից ե մարդ հիվան-  
դանում: Յերբեմն մեզ համար հիվանդության պատ-  
ճառը շատ պարզ ե: Որինակ՝ քայլում ե մարդը, ճա-  
նապարհը սայթաքուն եր, հավասարակշռությունը  
կորցրեց, ընկավ և վոտքը կոտրեց: Մենք հասկանում  
ենք, վոր վոտքի կոտրվածքը՝ հիվանդություն ե, և  
մենք գիտենք հիվանդության պատճառը: Դա դիբախտ  
պատճեար ե:

Կամ թե, մարդը փայտ եր կոտրում, պատճեամամբ  
կացնով զարկեց վոտքին և կտրեց մինչև վոսկորը:  
Առաջանում ե վերք, վորը հիվանդություն ե. այստեղ  
ևս հիվանդության պատճառը մեզ հայտնի յէ:

Մարդու մարմնի ամեն տեսակ ֆնասվածքը, վորը  
կարող ե խախտել նրա ամբողջությունը, կարող ե  
պատճառ դառնալ հիվանդության:

### 2. Թունավորում

Յերբեմն հիվանդությունն առաջանում ե թունա-  
վորումից: Մարդ կարող ե թունավորվել՝ գիտությամբ,

կամ թե պատահաբար. որինակ՝ ծծմբաթթվուաը նման ե գարեջրի. դեպքեր են լեղեր, լերը մարդիկ խմել են ծծմբաթթվուաը գարեջրի փոխարեն պարզ ե՝ նրանք մեռել են, վորովհետև ծծմբաթթվուաը շատ ուժեղ թույն ե.

Բայց կարող են դեպքեր լինել, լերը մարդը վոչ թե ինքն ե թունավորվել, այլ մի ուրիշն ե նրան թունավորել Այս դեպքում ևս թունավորումը կարող ե լինել գիտությամբ կամ պատահաբար, սիսալի հետեւանքով: Թունավորումը կարող ե վոչ միայն հիվանդություն պատճառել, այլև մահ:

Թուների շարքին ենք դասում նաև ողին և թունը. Այդ թուներով կարելի յէ թունավորվել միանգամից, ինթե մեծ քանակությամբ ողի խմենք կամ ծխենք չափից դուրս թութուն: Բայց ամենից հաճախ նրանցով մարդիկ թունավորվում են աստիճանաբար,


### 3. Պարագիտներ

Յերբեմն մարդու մարմի մեջ բնակվում են ձիճուներ, Դրանք վորդեր են, պարագիտներ: Դրանցից են լերիզորդը (սոլիֆեր) (նկար 3): Յերիզորդով կարելի յէ վարակվել, ինթե ուտենք վոչ բավականաչափ լեփած կամ տապակած միս: Հատկապես վտանգավոր է խոզի միսը, վորովհետև խոզն ամենակեր ե և թափառում ե ամեն տեղ և ուտում ե ամեն տեսակի աղբ թափթփուկներ, դրա համար ել վարակվում ե զանազան ձիճուներով: Խսկ ձիճուները բուն են դնում լողի մսի մեջ, վորոնց կարելի յէ սպանել, ինթե միսը լավ լեփենք կամ տապակենք: Բայց մարդիկ կան,


վորոնք միսն ուտում են կիսալեփ կամ համարլա թե հում: Այդպիսի մարդիկ հեշտությամբ վարակվում են լերիզորդով: Յերիզորդը կարող ե աճել և մեծ լերկարության հասնել Այդպիսի մեծ ճիճուն մեր մարմի ձրիակերն ե, վորը մարդու մարսած կերակուրը կլանում ե և ոգտագործում ե իր համար: Դրա համար ել այն մարդը, վոր տանջվում ե լերիզորդից, շտապակեր ե, շարունակ քաղց ե զգում, բայց չնայած հիվանդի մեծ ախորժակին և առատ սննդին, նա շարունակ նիհարում ե, վորովհետև լերիզորդը շատ արագությամբ ե աճում և նրան հարկավոր ե ավելի և ավելի կերակուրը: Այնպիս վոր, կարելի յէ ասել, վոր լերիզորդով հիվանդ մարդը շարունակ քաղցած ե և նիհար:

Բացի գրանից, ձիճուներն արտադրում են վասակար նկութեր, վորոնք վտանգում են հիվանդի առողջությունը: Աստիճանաբար հիվանդը թունավորվում է այդ վասակար նկութերով:

Կա նաև մի ձիճուն, վորը կոչվում ե եխինակոկ (տես նկար 4): Նա ապրում ե մարդու մարմի մեջ, նա



Նիմվանման չե, այլ պարկանման եւ Պարկի մեջ կառ  
բազմաթիվ բշտիկներ, վորոնցից լուրաքանչուրը  
ներկայացնում ե ապագա ճինվի սաղմը:



Նկ. 4. Եխինակոկի փամփուշը:

Մարդու եխինակոկով վարակվում ե շներից. Շների  
ազիքներում ապրում ե մի փոքրիկ ճիճու, վորը կաղմ-  
ված ե մի քանի մասերից և գլխիկներից (տես նկար  
5). Այդ մասնիկները ժամանակ առ ժամանակ  
գուրս են թափվում շան հետնանցքից, վորոնք լի լին  
մինում փոքրիկ ձվիկներով: Շունը հաճախ լիզում ե  
իր հետութեւ, վորի ժամանակ եխինակոկի ձվիկները  
կպչում են նրա լեզվին: Յեթե դրանից հետո շունը  
լիզե մարդու ձեռքը, այն ժամանակ մարդու ձեռքին  
կկպչեն շատ փոքրիկ, մեր աչքին աննշնարելի եխի-

նակոկի ձվիկները: Յեզ լեթե այդ մարդը անլվա  
ձեռքերով կերակուր ուտի, նա կարող է կերակրի հետ  
կուլ տալ նաև ալդ փոքրիկ ձվիկները և վարակվել ե-  
խինակոկով:

Եխինակոկն ամենից շատ սիրում ե մար-  
դու լյարդը, բայց կարող ե բուն զնել նաև  
թոքերում, փայծաղում, վորովախում և  
այլ գործարաններում: Եխինակոկը մանելով  
մարդու վորեն գործարան՝ սկսում ե կազ-  
մալուծել այն: Որինակ՝ լեթե նա մտնում  
ե մեր լյարդը, նա կազմալուծում ե նրա  
մեծ մասը: Դա շատ վնասակար ե մարդու  
առողջության համար, վորն իր հետեից  
բերում ե հիվանդություն: Բացի դրանից,  
եխինակոկը, ինչպես ամեն մի կենդանի  
գոյություն, պատրաստում ե վնասակար  
նյութեր, վորոնք թունավորում են մարդու  
որդանիզմը: Այնպես վոր եխինակոկը հի-  
վանդ մարդու մի քանի գործարաններ կազ- նկ. 5.  
մալուծում են և թունավորվում վնասակար եխինակոկ:  
Կոյութերով:

#### 4. Միկրոպեր

Յերբեմն հիվանդության պատճառն ըստ լերեւյթին  
անհայտ ե: Յենթաղրենք, թե մարդ առողջ իր և ու-  
րախ, բայց հանկարծ սիրտն սկսում ե սասափկ խառ-  
նել, լուծ ե առաջանում և նու ծանր հիվանդանում ե:  
Կամ թե տաքությունը բարձրանում ե, թուլ և գգում  
իրեն, գլուխը ցագում ե և մի քանի որից հետո մար-  
միւը ծածկում ե ցանով:

Նման դեպքներում շատ մարդիկ չեն կարող հասկանալ, թե ինչից առաջացավ հիվանդությունը։ Մարդը ընկավ, չլսասվեց, չկոտրեց վոտքը, նրա մարմնի վրա չկա վորեն գերք, միշտ ել կերել եր մաքուր կերակուր, վոչ մի թուշն չի ընդունել և վոչ ել ուրիշն և նրան թունավորել։ Ուրեմն ինչից նա հիվանդացավ։

Հնում կարծում եյին, թե նման դեպքում հիվանդի մեջ մտել և անմաքուր ուժ կամ չար վոգի, կամ թե հիվանդին կախարդել են, հիվանդությունն առաջացել և չար աչքից, նշանակում և «աչք են տվել»։

Մինչդեռ դա իսկապես այդպես չե։ Չար աչքից և վոչ ել վորեն մեկի չար ցանկությունից մարդ չի հիվանդաւալ։ Այնպիսի հիվանդություններ, վորոնք տուժնորդվում են լուծով, սրտի խառնոցով, տաքությամբ, թուլությամբ և մարմնի ցանով, կոչվում են վարակիչ կամ կազող հիվանդություններ։ Մարդիկ արգեն գաղուց նկատել են, վոր մի քանի հիվանդություններ գտանգավոր են շրջապատի համար։ Հենց դրանք ել վարակիչ հիվանդություններն են։

Ի՞նչ բան և վարակը։ Ալդ բանը պարզվել և շնորհի գիտնականների ջանքերի ներկայումս շատ ավ հայտնի չեն մեզ վարակիչ հիվանդությունների պատճառները։


Մարդը շրջապատող բնութանը ծանոթանում է իր զգալարանների միջոցով։ Մարդս ունի աչք և նրանով տեսնում ե. ունի ականջներ, վորոնցով լսում ե. քըթով զգում և բազմաթիվ իրերի հոտը, վերջապես մարդս ունի շոշափելք, վորը տեղավորված է մեր մաշկի մեջ։ Նա իմանում է—հատկապես մասների մի-

շրցով—առարկաների ձևը, մեծությունը, պնդությունն ու կակագությունը, ծանրությունն ու թեթևությունը, առանությունը, տաքությունը և այլն։

Մեծ նշանակություն ունեն աչքերը՝ դժբախտաբար մեր աչքերը կատարյալ չեն, նրանց միջոցով կարելի յե տեսնել միայն բավականաչափ խոշոր իրեր, իսկ այն իրերը, վորոնք բավականաչափ մեծ չեն, իրենց շափով շատ փոքր են, անմատչելի չեն մեր տեսազության։

Սակայն, յերբ մարդիկ գտան միկրոսկոպը՝ մանրադիտակը, այն ժամանակ նըա միջոցով սկսեցին տեսնել շատ հետաքրքրական նորություններ։

Մանրադիտակը (միկրոսկոպը) մի հատուկ գործիք է (նկար 6). Ունի խողովակ, վորի մեջ գրված են մի քանի հատ մեծացնող ապակիներ, վորոնց շնորհիվ մարդ տեսնում է զանազան ձևի տարկաներ մեծացրած տեսքով։ Մանրադիտակներ կան, վորոնք առարկաները մեծացնում են մի քանի հազար անգամ։ Ալդպիսի մանրադիտակի տակ ճանճի թաթը մեծ վորով չափ ե յերեսմ, ծածկված բազմաթիվ մազմղուկներով։ Այն, ինչ վոր անհնարին եր սեր սովորական



աշքի համար, մենք նրանց կարող ենք տեսնել մանրադիտակի ոգնությամբ: Նշանակում ե, մանրադիտակն ուժեղացնում ե մեր տեսողությունը մի քանի հազար անգամ:

Յերբ մարդիկ դուան և կատարելագործեցին մանրադիտակը, նրանք տեսան չափազանց մանր կենդապությունների մի ամբողջ աշխարհ, վորոնց մասին մինչ ալդ գաղափար չունեցին: Այդ շատ մանր դությունները կոչվում են միքրոպներ:

Յերեաց, վոր մանրեները գտնվում են տմեն տեղ և չափազանց մեծ թվով, հմացանք նաև, վոր նրանք ապրում են և՛ ջրում, և՛ ոգում, և՛ հողի մեջ:

Հետաքրքրականն այն ե, վոր մանրեները շատ արագությամբ բազմանում են: Սովորաբար մանրեները և սուցվում ե մեկի փոխարեն լեռներու մանրեն: Մանրեներից մի քանիսը ամեն 5 որը մեկ կիսվում են ու ու թղթի կտոր և հաշվել, թե 24 ժամում մի մանրենց քանիսը կառաջանաւ նախապես զգուշացնում ենք, հաշվել:

Մակայն մանրեները միայն դրանով չեն հետաքրքրական: Պարզվել ե, վոր նրանք մեծ մասնակցություն ունեն մեզ շրջապատող կլանքում: Ամենուրեք, ուր եւ Որինուկ՝ ոյուղացին աղբուզ պարարտացրել ե դաշտը: Աղքի մեջ գտնվում են բազմաթիվ նյութեր, վորոնք պետք են բուկերին: Հայտնի ին, վոր լավ պարարտացրած դաշտը տալիս ե բարձր բերք, քան թե այն

դաշտերը, վորոնք պարարտացված չեն: Յեվ պարզ ե, թե ինչու Լավ խնամված դաշտերում բուկերը ստանում են շատ սննդաբար նյութեր, դրահամար ել նրանք լավ են աճում: Բայց պարզված ե նաև այն, վոր թարմ աղբից բույսերը չեն կարող ստանալ մեծ քանակությամբ անհրաժեշտ սննդանյութեր: Հարկավոր ե, վոր աղբը հողի մեջ հասնի, իսկ նա հասնում է շնորհիվ մանրեների հատուկ աշխատանքի: Նշանակում ե, չինելին մանրեները, աղբը հողի մեջ չեր հասնի և վոչ մի ոգուտ չեր առ բերքին:

Մենք նկատում ենք, թե ինչպես և թթվում կաթը և վերածվում մածնի, ինչպես և թթվում գինին և դառնում քացախ, թե ինչպես լեռքենն թթվում և բացպահած գարեջուրը և փշանում, ինչպես և զառնում յուզը կամ ճարպը, ինչպես և հոտում միւսը, ձուկը և ալյն, Այդ տմեննն առաջանում է շնորհիվ մանրեների գործունելության: Այսպիսով մանրեները մարդու համար և՛ ոգտակար են, և՛ ֆլամակար:

Բանը նրանումն ե, վոր գորություն ունեն չափանց բազմապիսի մանրեների տեսակներ, վորոնցից վոմանք մեզ համար ոգտակար են, իսկ վոմանք ել ֆլամակար: Այսահեղ պատահում ե նույնը, ինչ վոր կենդանիների հետ և կատարվում, կենդանիների մի քանի տեսակներ մեզ ոգտակար են, ինչոքն, ոքինակ, ձիերը, կովերը, վոչխարները, խողերը, համերը և ալյն: իսկ ուրիշները՝ ֆլամակար որինակ՝ գալընը, ուծերը, մորեկիը և այլն:

Նմանապես ել մանրեներն են: Նրանց վարոշ տեսակները մեղ խոշոր ոգուտ են տալիս, իսկ վոմանք ել ահակի ֆլամ:

Այդ ամենը ներկայումս շատ լավ է պարզված: Յերբ տանտիկինը պատրաստում է խմորը և նրա հետ խառնում և թթվածորը (դրոժը), նա չի կասկածում, վորթթվածորը նույնպես մանրեներ են:

Յերբ տանտիկինը մոռացության և մատնում մսի կը տուրը, թողնում ե և նա հոտում ե, այս գեղքում ես նա չի կասկածում, վոր այդ բանում մեղավորը մանրեներն են: Բայց գործի ելությունը դրանից բնավ չի փոխվում:

Տեսնենք 7-րդ նկարը: Այստեղ նկարված են մանրեների տարրեր տեսակի միկրոպներ: Արանքը բուրն ել շատ վնասակար ու հիվանդություններ առաջացնող գորություններ են, վորովհետեւ պարզվել ե, վոր վարակիչ հիվանդությունների մեջ մեղավորը մանրեներն են: Յերբ մենք ասում ենք, թե մարդ վարակվել ե մի վորեև հիվանդությամբ և հիվանդացել ե, դա նշանակում ե, վոր նրա մեջ մուտք են գործել վորեև ձևով մանրեներ և առաջացրել են հիվանդություն: Վարակ, դա նշանակում է մանրեներ:

Այժմ մեզ հասկանալի յէ, թե ինչու առաջները վարակիչ հիվանդությունների մեջ մեղավորում ելին կախարդներին և վհուկներին կամ թե չե վորեև մեկ թշնամու չար աշքին: Կախարդներ և վհուկներ գոյություն չունեն: Վոչ մեկի աչքը չի կարող պատճառել վարակիչ հիվանդություն: Բայց մանրեները շատ են փոքր, նրանք տնտեսանելի յեն և դրա համար ել մարդիկ չեն նկատում, թե յերբ և ինչպիս մանրեն ներս թափանցեց իրենց մարմնի մեջ: Դրա համար ել առաջարկած վորեև բացարություն ելին ուղղում գտնել վարակիչ հիվանդության մասին: Այժմ, յերբ գտնված



և մանրադիտակ, ալգպիսի մտացածին ըացաւրությանները և ավելորդ են, և զնասակար: Վարակիչ հիվանդությունների պատճառը ներկայումս պարզ եւ շատ-շատ են և շատ ել տարածված: Մարդկանց մեծամասնությունը մեռնում ե վորեւ վարակիչ հիվանդ տարածվությունից: Յերբեմն մի վորեւ հիվանդություն շատ նում, այն ժամանակ մենք ասում ենք, թե համաձարակ կա: Մոտ անցյալում մենք ապրել ենք տիֆի, ուղղիքին նաև ժանտախտի համաճարակներ: Ավելի առաջները տեղի մեռնում ելին մարդկանց մեծաքանակ խմբեր:

Ներկայումս յերկրներ կան, ուր դոյլություն ունեն դեռևս այդ համաճարակները, ինչպես, որինակ՝ Հնդկաստանը: Այդ յերկիրը գտնվում է Ասիալում և ընկած է մեր Միությունից դեպի հարավ: այստեղ միշտ ել կա ժանտախտ, խոլերա, ծաղիկ: Հնդկաստանում ամեն տարի տարբեր վարակիչ հիվանդություններից մեռնում ե լոթ միջիոնից ավելի մարդ: Բայց մեզ մոտ ել բավական թվով մարդիկ են մեռնում զանազան տեսակի վարակիչ հիվանդություններից,

Այսպիսով կարելի է հիվանդանալ վոչ միայն զըժդախտ պատճարներից, այլ և մանրեներից: Աչքի յերսնված մարդը, վոր վարակիչ հիվանդությունը վոր անհայտ թույներով: Որինակ՝ խոլերայի ժամանակ մարդը փսխում է և լուծ ունի Բայց մկնդեղով (ձշակով) թունավորված մարդն ևս ունի փսխոց և

փոքրիկ մանրեներից, վորոնք նման են ստորակետների: Նրանք մտնում են մեր աղիքները և շատ արագությամբ աճում են: Պարզ ե, վոր նրանք այնտեղ պատրաստում են ինչ վոր թույներ, վորոնք թունավորում են մարդուն և նրան հիվանդացնում: Վորոշ նմանություն կա մկնդեղի և խոլերայի մանրեներից տառացած թույների միջև:

Թույներ կան, վորոնք դանդաղ են ազդում: Մանրեների աեսակներ կան, վորոնք արտադրում են զանդաղ ազդող թույներ և առաջ են բերում տեսական (խրոնիկ) հիվանդություններ: Արագ են ազդում խոլերայի մանրեները, իսկ գանդաղ՝ սիֆիլիսի մանրեները:

### 5. Անկանոն կյանք վարելը

Յերբեմն մարդ կարող է հիվանդանալ նրանից, վոր անկանոն և ապրում, չափազանց շատ և աշխատում, կամ չափից զուրս շատ և ուսում և ճարպակալում, կամ շատ ողի լի խմում, ծխում և շատ, չափից զուրս քիչ և քնում կամ շատ: Բժշկությունը շատ կանոններ ունի ու ցուցմունքներ և տալիս: և լիթե անուշադիր գտնվենք, մենք կհիվանդանաք և կկորցնենք մեր առողջությունը:

Այսպես, ուրեմն, վորպեսզի յերկար ապրենք և պահպանենք մեր առողջությունը, պիտի իմանանք, թե ինչպես աշխատենք և ինչպես հանգստանանք, ինչպես ջուտենք և խմենք, ինչպես քնենք և հազնը գենք, ինչպես պաշտպանվենք վարակիչ հիվանդություններից: պիտի իմանանք՝ ինչպես ամրապնդենք մեր առողջությունը:

Հետեւալ զրուցներում կխոսենք գրանց մասին:

ԶԲՈՒՅՑ ԱԵՐԿՐՈՐԴ

Ինչպես են մարդիկ վարակվում մանրեներով. ինչպես խուսափել միքանի ծանր հիվանդություններից, որինակ՝ բժանվոր յևի անդրադարձ տիֆից, խոլեռայից, արյունալից լուծից, վորովայնի տիֆից, սիֆիլիսից յևի տուբեկուլյոզից:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՎԱՐԱԿՎՈՒՄ ՄԱՐԴԻԿ ՄԻԿՐՈԳՆԵՐԻՑ

Նախորդ զրուցից մենք իմացանք, զոր մարդիկ ամենից համախ հիվանդանում են վարակիչ հիվանդություններով. Յեթե հնարավոր լինի վոչնչացնել վարակիչ հիվանդությունները, մարդկանց կյանքը շատ ավելի կլավանա. նույնիսկ յեթե հաջողվեր պակսեցնել վարակիչ հիվանդություններից տանջվող մարդկանց թիվը, այդ գեղքում ևս խոշոր ոգուա կստանար մարդկացին հասարակությունը.

Գիտությունն արդեն այդ խնդրում խոշոր հաջողություններ և ձեռք բերել բաց դա մեզ չի բավականացնում, այդ հաջողությունները դեռ քիչ են:

Գիտի պարզ ասեմ, վարակիչ հիվանդություններից տանջվող մարդկանց թիվը ել ավելի պակաս կլիներ, յեթե մարդիկ իմանալին, թե վորտեղից և վտանգը և ինչպես խուսափել նրանից, այլև ցանկանալին նրանք ողովել իրենց ունեցած գիտությունից.

32

Ժիշկներ և գեղորակը այնտեղ քիչ են, քան քաղաքներում. բժշկվելն այնտեղ համեմատաբար դժվար է: Դրա համար ել կոլխոզնիկը հատկապես լավ պիտի իմանա, թե ինչպես և մուտք գործում վարակը մարդու մարմնի մեջ և ինչպես պետք և նրանից խուսափել:

Յեզ իսկապիս մանրեները շատ են փոքր. նրանք առանց մանրադիտակի անտեսանելի յեն հաստրակ տչքին, ուստի միշտ ել պատրաստ պիտի լինել:

Դա հեշտ է: Զգուշաթյան սովոր մարդու համար դժվար չի զգասա լինել:

Հարկավոր և ամենից առաջ զինվել գիտությամբ:


Ինչպես կարող են մանրեները ներս թափանցել մարդու մարմնի մեջ:

Մենք արգեն ասացինք, զոր կենդանի մանրեներ գտնվում են և որում և՛ հոգում, և՛ ջրի մեջ, և՛ սննդաբար նլութերի վրա: Նրանցից շատերը գտնվում են նուև մեր մաշկի վրա: Միզ համար այժմ պարզվում է, թե ինչպես մեր այդ շատ մանք թշնամիները կարող են մանել մեր մարմնի ներսը.

ԹՈՔԵՐ ՅԵՎ ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

Ամենից առաջ մեր որդանիդմբ կարող են մանել բազմաթիվ մանրեներ ողի միջոցով, վորը մենք շնչում ենք: Զշնչել չենք կարող: Իսկ ողի մեջ կարող են գտնվել չափազանց շատ մանրեներ: Ողի մեջ վորքան շատ փոշի գտնվի, այնքան շատ ել մանրեներ կարունեալի: Բարձր լեռներում և ափերից հեռու ծովի վրա քիչ փաշի կա: Դրա համար ել լեռնացին և ծովալին ողի մեջ մանրեներ քիչ են:

Բայց մանրեները կարող են դանվել վոչ միայն փուշու, այլև թքի, լորձունքի, խորխի մեջ, վոր արտապրում և հիվանդ մարդը: Յերբ մարդ խոսակցում է, նրա բերանից դուրս են թռչում թքի փոքրիկ մաս-



Նկ. 8. Թռչում և շնչափող. A—Շնչափող; B—Զարշնչափողի ճյուղափորությունները ձախ թոքում; C—Աջ շնչափողի ճյուղափորություններն աջ թոքում:

նիկներ, վորոնք այնքան փոքր են, վոր մենք չենք տեսնում ու նկատում: Բայց ճշտած են, վոր թքի նման մասնիկներ դուրս են թռչում ամեն մի խոսող մարդու բերանից:

Յերբեմն այդ մասնիկներն ալնքան մեծ են, վոր

մենք նկատում ենք: Կան այնպիսի մարդիկ, վորոնք խոսելիս, ինչպես ասում են, «թռուք են շաղ տալիս»: Այդպիսի մարդիկ ահաճություն են պատճառում շըրջապատին և բոլորն ել աշխատում են նրանցից նեռումնալ, վորպեսզի չթքութեն:

Յերբ մարդ փռշառում է, նրա քթանցքներից ուժով դուրս են թռչում բավական խոշոր լորձունքի մասնիկներ, իսկ հազի ժամանակ՝ թքի ու խորխի ցալքուններ: Այդ ցալքունների ու փոքրիկ մասնիկների մեջ նույնպես մանրեններ կան. խոսակցության ժամանակ նրանք կարող են ընկնել ուրիշ մարդկանց վրա: Յերբեմն այդ փոքրիկ մասնիկներն ողի միջով տարածվում են, և առողջ մարդիկ շնչելով՝ վարակվում են նրանցից:

Ողը միանգամից չի մտնում մեր թոքերը: Նրա ձանապարհն անցնում է մեր քթավ, շնչափողով, թոքալին խողովակներով (նկար 8): Քթի և շնչափողի մեջ փոշու մի մասը մնում է, մի մասն ել մեր որդանիզմից հեռանում և լորձունքի, խորխի հետ և փռշտոցի ժամանակ: Սակայն, քիչ փոշի չե մնում մեր թոքերի մեջ, իսկ փոշու հետ միաժամանակ մնում են նաև մանրեններ:

### ՍՏԱՄՈՒՑՈՒՅ

Մանրենները կարող են մարդու մեջ մտնել նաև կերակրի և խօմիչքի միջոցով: Ալսաեղ արգեն ձանապարհը բերանն է, վորկորը և ստամոքսը:

Յենթաղենք, թե մարդ ճաշի յե նստում անլիւա ձեռքերով, վորոնց վրա մնում ե կեղուը, իսկ կեղտի մեջ դտնվում են բազմաթիվ մանրեններ: Պարզ է, վոր

այդ մանրեները մարդու մարմնի մեջ ևն մտնում կերտելի հետ: Կամ թե չե, իերը վորեն ճանձ նստում և ազտուությունների վրա, նրա թաթերին կպշում են մանրեներ, ապա նա նստելով հացին՝ թողնում է նրա վրա մանրեները. և իերը մարդ ուսում և այդ հացը, նա հացի հետ միաժամանակ կռւլ և տալիս նաև մանրեները:

### ՄԱԾԿ

Մանրեները կարող են որդանիզմի մեջ մտնել նաև մեր մաշկի միջոցով: Բայց դա կարելի էն միայն այն ժամանակ, իերը մաշկը վատանգված ե. քանի մաշկն ոռողջ ե, մանրեները չեն կարող թափանցել մարդու մարմնի մեջ: Սակայն նրանց համար մեծ հնարավուրություն և ստեղծվում մաշկի ամենաչնչին վասավածքի ժամանակ: Մաշկի յուրաքանչյուր չանդովածք, շարդվածք կամ թե ճեղքվածք, այլիս չխոսելով վերքի մասին, յայն դուռն են բացում մանրեների համար:

Յերբեմն վերքը նույնիսկ աննկատելի իւ մարդու աչքի համար, ախուամենայնիվ մանրեն կարող ե նրա միջոցով մարդու մարմնի մեջ մտնել և առաջացնել հիվանդություն: Նույնիսկ բավական ե ամենաանշատ չանդովածք, վորպեսզի ստացվի թարախակալում, պղուկ և ալլն:

Յերբեմն ել մանրեները մարդու մարմնի մեջ են մտնում կենդանիների խածի ժամանակ, նույնիսկ շատ փոքրեկ միջատների ու պարագիտների: Առանձնապես վտանգավոր են խոշոր ու կատաղած կենդանիները: Բայց վտանգավոր ե նաև վօջիլի և մոծակի խածը: Վոջիլն իր խածով կարող ե մարդուն վարակել:

բժագոր և վերադարձ տիֆով, իսկ մոծակը՝ յերկարաւու ու համառ մալարիայով:

### ԼՈՐՉԱԹԱՂԱՆԹ

Բացատրենք այս խոսքը: Անշուշտ դուք նկատած կինեք, վոր յերեսի մաշկը շրթունքների վրա նուրբ ու կարմրագույն ե. և իերը նա տարածվում է բերնի ներսը, նա ծածկում է և արտադրում է լորձունք, դրա համար ել նա կոչվում է լորձաթաղանթով: Վոչ միայն բերանը, այլև շնչառության խողովակները, վորկուը, ստամոքսը և աղիքները, բոլոր այդ գործարանները ներսից պատաժ են լորձաթաղանթով: Լորձաթաղանթով են պատաժ տղամարդու և կնոջ սեռական գործարանները: Յերը մենք ասում ենք, թե մանրեները կարող են ներս թափանցել մարմնի մեջ շնչառության և մարսողության գործարանների միջոցով: Դրան պիտի տվելացնենք նաև, վոր մանրեները կարող են անցնել և այդ գործարանների լորձաթաղանթի միջոցով, ինչպես և սեռական գործարանների: Այդ հանապարհով մարդու մարմնի մեջ կարող են մտնել շատ վտանգավոր մանրեներ, վորոնք կարող են առաջացնել սիֆիլիս: Յեվ դա տեղի կարող ե ունենալ սիֆիլիտիկների հետ շիման ժամանակ կամ այնպիսի իշերի գործածությամբ, վորոնց գործ ե ածել սիֆիլիտիկը:

Սրանք են գլխավոր ձանապարհները, վորոնցով մանրեները կարող են վարակել մարդուն. այն ե՝ ողի միջոցով, կերակրի, խմիչքների, վերքի, չանգովածքի, շարդվածքի, խածվածների և առողջ ու հիվանդ մարդկանց հետ ունեցած շփման ժամանակ:

ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆ Ե ՄԵՐ  
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ

Մենք դիտմամբ լերկարորեն խոսեցինք մանրեների և այն միջատների մասին, վորոնցով նրանք մտնում են մարդու մարմնի մեջ: Շատ կարևոր ե այդ իմանալ, վորովինետև շնորհիվ դրա կարելի է սովորել, թե ինչպես խուսափել վարակիչ հիվանդություններից:

Ամենից առաջ վերհիշենք, վոր մանրեները գտնըում են այնտեղ, ուր շատ փոշի և միջատներ կան. իսկ դա լինում է այն վայրերում, ուր շատ կեղու ու աղը կա: Այնտեղ, ուր մարդիկ ապրում են խիտ, նեղու աղտոտ, գոյանում են շատ մանրեներ, վորոնք առաջցնում են վարակիչ հիվանդություններ:

Խորհրդալին բժշկականությունն ասում ե. «մաքրությունն առողջության նախապայմանն են: Դատարկ խոսք չե դա: Հարկավոր ե թափանցել ալդ բառերի իմաստի մեջ և կտեսնեք, վոր դա ճշմարիտ ե. վորտեղ կեղու կա, այնտեղ ել շատ հիվանդություններուր մաքրությունն ե իշխում, ընդհակառակը, քիչ կամ բոլորովին բացակալում են հիվանդությունները:

Այժմ մենք կարող ենք անցնել մի քանի խորհուրդների:

Կոլխոզնիկներն ապրում են շատ անդամ պարզ առանձիքի տակ, լերբեմն ել այնպիսի աներում, ուր առաջներն ապրելիս են լեղել կալվածատերերն ու նրանց կառավարիչները: Ահա ձեզ տներ, վորոնք առաջները փալում ելին մաքրությամբ, ալժմ քիչ շեն զեղքեր, վոր նրանք գտնվում են աղտոտության ու ապականության մեջ: Մեր թշնամիները շարախնդությամբ

մատնանշում են դրա վրա և ասում. «Ահա, թե ուր հասցրինք: Իհարկե, ալդ խոսակցությունների համար ընազ չպետք ե հետ վերադարձնենք կալվածատերերին իրենց կալվածքները և գառնանք նրանց գերին: Այլ հարկավոր ե ապացուցել, վոր յիթե մեծ տան մեջ առաջներում ապրում եր պորտաբուզի ու ձրիակերի մի փոքրիկ ընտանիք, իսկ այժմ աշխատավորների մի քանի ընտանիքներ, նման տունը լերեսի վրա չի ձգվի և վոչ ել աղտոտվի:

Ինակարանի մաքրությունն առաջին և հիմնական խնդիրն ե:

Հնտագայում մինչ կասենք, թե ինչպես գրան հասանք:

Մաքուր պիտի պահել վոչ միայն բնակարանը, այլև բակը, տնտեսություններին հատկացրած շենքերը, այդին, պարտեզը և այլն:

Մաքուր պիտի պահել նաև հագուստն ու մարմինը:

Հարկավոր ե աղտոտությունից պաշտպանել կերակրեղինն ու խմիչքը. պիտի հսկել ջըհորներին, վոր նրանց մեջ աղտոտություններ շթափվեն և վարակեն ջուրը:

Սրանք են մեր առաջ գրված կարևոր խնդիրները՝ և յեթե մենք ցանկանում ենք խուսափել շատ վարակիչ հիվանդություններից, պիտի ճշտորեն կատարենք ալդ նախազայմանները:

Բացի դրանից պիտի առողջ մարդկանց անջատենք հիվանդներից, ընդհանրապես պիտի խուսափել վարակից: Իսկ դրա համար չպիտի ուտել և խմել ընդհանուր ամաններից, չպիտի միենուն ծխամորճով կամ ուրիշի կիսատ թողած ծխախոտը ծխել:

ԵԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՎՃԱՆԴԱՎՈՐ ՅԵՎ ՎԱՐԱ-  
ԿԻՉ ՀԻՂԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Վորժնք են կոլխողնիկների համար ամենավտանգա-  
վոր հիվանդությունները:

Սկսենք բծավոր և վերադարձ տիֆից:

Բծավոր տիֆ

Հիվանդությունն սկսվում է զլխացավով, թուլու-  
թյամբ և տաքությամբ: Հիվանդի ախորժակը կորչում  
և մի քանի որից հետո մարմինը ծածկվում է ցա-  
սով: Հաճախ հիվանդը առաջության մեջ խոսում է:  
Հիվանդությունը կարող է մահով վերջանալ: Յեթե  
հիվանդն առողջանում է, սովորաբար լերկորդ ան-  
դամ չի հիվանդանալ բծավոր տիֆով:

Վերադարձ տիֆ

Վերադարձ տիֆն սկսվում է հանկարծակի դողոց-  
քով, տաքությամբ, զլխացավով, ախորժակը կորչում  
և քիչ չեն դեպքեր, վոր հիվանդը տաքության մեջ  
խոսում է: Տաքությունը տեսում է 5—7 որ, առա հի-  
վանդը քրտնում է, տաքությունը կորչում և և զգում  
և իրեն լավ: Ախորժակը վերադառնում է, փոքր առ  
փոքր ուժերը վերականգնում են: Հիվանդը կարծում  
է, թե արդեն առողջացել եր:

Սակայն մի քանի որից հետո նորից դողացնում է,  
նորից տաքություն ու զլխացավ: Հիվանդությունը  
կրկնվում է: Դրա համար ել այդ հիվանդությունն-  
անդամ են վերադարձ տիֆ: Յերկորդ անդամ եւ

հիվանդությունը տեսում է նույնքան որ, վորքան ա-  
ռաջին անդամ: այս անդամ ևս հիվանդությունը վեր-  
ջանում է քրտինքով:

Մի քանի որվա շհանգստից հետո հիվանդությու-  
նը լերբորդ անդամ է կրկնվում: Յեվ այսպես շարու-  
նակ: Վերադարձ տիֆը կարող է կրկնվել 10 և ավելի  
անդամ: Հիվանդը չափազանց հյուծվում է և կարող է  
մեռնել:

Բծավոր և վերադարձ տիֆը կարող են հիվանդից  
առողջին անցնել հագուստի և սպիտակեղենի վոջիկ  
միջոցով: Վերադարձ տիֆը կարող է տարածվել նաև  
փայտոջիկ միջոցով: Այդ միջատները հիվանդից առող-  
ջին անցնելով՝ խայթոցի միջոցով մարդուն վարակում  
են հիվանդության մանրեներով: Այստեղից պարզ է,  
վոր մեր հիմնական խնդիրը լինելու յև վոչնչացնել և  
աղատիկ վոջիլներից և թույլ չտալ նրանց աճել:

Յեթե մարդիկ ապրում են մեծ խմբերով ու նեղ-  
վածք բնակարաններում, բավական ե, վոր նրանցից  
մեկը վոջլոտի, վորպեսզի մյուսներին ևս մատակարա-  
րի: Դրա համար ել պիտի աշխատել ու հոգ տանել,  
վոր բոլորն ել լինեն մաքուր:

Ամենալավ միջոցը վոջիկ դեմ, դա շաբաթը մեկ  
բաղնիք գնալու եւ սպիտակեղենը փոխելը: Հին ճեր-  
մակեղենը, նախքան լվանալը, պիտի լեփել թեկուզ  
հասարակ ջրի մեջ, բայց լավ և լեփել սողալի մեջ:  
Տաքությունից վոչնչանում են վոջիլները և նրանց  
դրած անիծը: Յերբ լվացած ճերմակեղենը հարթու-  
կում են, առա հարթուկը պիտի անցկացնել կարի  
վրայով: Յեթե այս կանոնը ճշտությամբ պահպանվի,  
վոջիլները շատ շուտով կանճայտանան:

Կոլխոզնիկին կարող են սպառնալ նաև ուրիշ շատ հիվանդություններ: Դրա համար ել մեր ընթերցողի ուշադրությունը կենարոնացնենք մարսողության գործարանի մի քանի հիվանդությունների վրա: Որինակ խոլերայի, արյունալից լուծի և վորովայնի տիֆի:

### Խոլերա

Խոլերայի մասին մենք արդեն հիշատակել ենք: Այդ հիվանդությունը հին և և շատ վտանգավոր: Նա սովորաբար սկսվում է փսխոցով և լուծով: Լուծը լինում է խիստ և հաճախ. հիվանդը շատ շուտով կորցնում է ուժերը, քիթը սրածայր և դառնում, աչքերը ներս ընկնում, լերքեմն ել ձայնը կորցնում: Խոլերան կարող է մահով վերջանալ:

### Արյունալից լուծ

Արյունալից լուծը նմանապես վտանգավոր է: Ճիշտ և, վոչ խոլերայի չափ, բայց քիչ մարդիկ չեն մեռնում արյունալից լուծից:

Հիվանդությունն սկսվում է փորի ցավերով և զըռդառցով, վորոնց հետևում է լուծը: Սկզբներում լուծը հաճախակի չե, բայց հետո դառնում է հաճախակի հիվանդն ուղում է շարունակ արտաքնոց գնար: Արտաթորությունների մեջ շուտով լերքեմն ե արյուն: Վորքան լերկարում է հիվանդությունը, այնքան հաճախակի յեն դառնում արտաթորությունները և ամեն անգամ շատ քիչ: Սակայն նրա մեջ շատ և լինում լորձունք և արյուն: Հետանցքաւմ զգացվում են ուժեղ ցավեր. հիվանդի առջությունը բարձրանում է:

### Վորովայնի տիֆ

Վորովայնի տիֆը սկսվում է աստիճանաբար, բայց անում և լերկար, մի քանի շաբաթ: Սկզբում մարդուշադրություն չի գարձնում, ականջի լիտե և ձգում, կարծում է, թե հիվանդությունն ինքն իրեն կանցնի, սակայն քանի գնում, ավելի յե վատանում: Սովորաբար հիվանդն առավոտներն իրեն թեթև և զգում, քան գիշերները, բայց հիվանդության լեռուն շրջանում վատ և զգում նաև առավոտները, իսկ գիշերներն ավելի ծանր: Հաճախ հիվանդն ինքն իրեն խոսում է, կորցնում և գիտակցությունը:

Վորովայնի տիֆն իր անունը ստացել է նրանից, վոր հիվանդության ընթացքում հիվանդի աղիքների մեջ առաջանում են վերքեր: Այդ ժամանակ կարող է հիվանդի փորը չցավել և նույնիսկ վոչ ել լուծ ունենալ: Սակայն սակավ չե նաև լուծը:

Վորովայնի տիֆով հիվանդների մի մասը մեռնում են, իսկ մասցածներն առողջանում: Սակայն հիվանդությունը մի անգամից չի անցնում, այլ քիչ-քիչ: Որո՞րի վրա հիվանդն իրեն զգում է լավ, ախորժակը բացվում է, անցնում և տաքությունը, ավելանում են ուժերը:

Վերջին լերեք հիվանդությունները՝ խոլերան, արյունալից լուծը և վորովայնի տիֆը կոչվում են «ջրային վարակներ»: Արդպես են կոչել նրա համար, վոր ամենից հաճախ մարդիկ այդ հիվանդություններով վարակվում են հում ջուր խմելուց, վորի մեջ զտնվում արակը մանրեների մանրեները: Ջրի վարակումը մանրեներով աեղի յե ունենում հետեւյալ ձեռվանթաղրենք, թե մեկը հիվանդացել է խոլերայով,

Նրա փսխոցն ու արտաթորություններն իրենց մեջ պարունակում են մեծ թվով խոլերայի մասնեներ։ Ջրհորը՝ գտնվում և արտաքնոցից վոչ հեռու, փորից ճետղիետե ծծվում են արտաքնոցի ջրային մասերը և այդ ձեռվ խոլերայի մասնեներն անցնում են ջրհորի ջրի մեջ։ Յեթե ջրհորի ջուրը յեռացնենք, մանրեները կվոչնչանան։ բարձր տաքութան նրանք չեն դիմանում։ Բայց յեթե վորեն մեկը վարակված ջրհորի ջուրը խմում և հում, նա կարող է հիվանդանալ իրուրայով։

Կամ թե՝ յենթաղրենք, թե մեկն ու մեկը հիվանդանում և արյունալից լուծով։ Նրա մերժակեղենը տառում են լվանալու ջրհորի մոտ։ Ճերմակեղենը նախապես չեն լեփել և նա հարուստ և մանրեներով։ Յեթե ջրհորի ափերը լավ չեն ծածկված, կամ թե հողը փըխուսն ե, այն ժամանակ լվացքի ջուրը կարող է ծծվել և թափվել ջրհորը։ Պարզ ե, վոր ջրհորի ջուրը կարող և աղտոտվել արյունալից լուծի մանրեներով։ Ով վոր խմի այդ ջրհորի հում ջուրը, կարող է հիվանդանալ արյունալից լուծով։

Կամ ասենք, թե մեկն ու մեկը հիվանդացել և վորվալիք տիֆով։ Նրա արտաթորությունը հարուստ և մանրեներով։ Յենթաղրենք, թե հիվանդի կինը արտաթորությունով լի զարշոկը տանում և ու պարպում բանջարանոցում, իսկ այնտեղ բանում են բանջարեղեններ։ Յեթե վորեն մեկն ուտի այդ բանջարեղենից անլիք, նա կարող է հիվանդանալ վորովայնի տիֆով։

Վերջին ժամանակներս գիտնականները պարզել են, վոր վարովայնի տիֆը, խոլերան և արյունալից լուծը տարածվում են նաև ճանճերի միջոցով։ Ճանճերը լի-

նում են ամեն տեղ, յերբեմն նրանք ձու յեն դնում փելինի վրա, յերբեմն ել մարդկային աղբի։ Այժմ պարզ ե, վոր ճանճը նստում և հիվանդ մարդու արտաթորությունների վրա, նրա վրա կտչում են մանրեներ, վորովինետե նրա մարմինը ծածկված և մաղմզուկներով։ Յեթե մանրեներով բեռնավորված մի ճանճ նստի հացին, շաքարին կամ ալլ մթերքների վրա, այն ժամանակ նա կաղտութիւ այդ իրեն։ Իր աղտոտ թաթերով։ Կերակուրն արդեն վարակված և և ով նրանից ուտի, հեշտությամբ կարող և հիվանդանալ։

Նրա համար ել մենք կոլխոզնիկներին կտանք մի քանի անհրաժեշտ խորհուրդներ։

1) Յուրաքանչյուր ջրհոր պիտի շինված լինի այնպիս, վոր նրա մեջ վարակ չմտնի։ Նրա համար լույն և ջրհորները խորը փորել։ Պատահում ե, յերք փորում են ջրհորը և ջուրը գտնվում ե լիրես, նա հայտնվում է 5—7 մետրի վրա։ Նման «մակերեսալին» ջուրը հաճախ ախտաված և լինում։ Ավելի վստահելի ջուրը խոր հորի ջուրն ե։

Ամենից հուսալին այն ժամանակ կլինի, յերք ջրհորը փորելու դեպքում խորհրդակցեն տեղի սանիտարական բժշկի հետ։ Յեթե բժշկին ասի, վոր ջուրը լավ ե, այն ժամանակ կարելի է ջրհորից ոգովել։

Ջրհորի պուռնզը պիտի շինել բարձր և ամօւր փայտից, լավ կլինի, վոր նա պատրաստվի հաճարի փայտից։

Ամենից վստահելին ջրհան մեջենա դնելն ե, թե կուզ նա լինի փայտից, վորպեսզի կարելի լինի ջրհորից ջուրը քաշել։ Յեթե բան ե, վորեն կերպ անհնարին ե ջրհան մեջենա դնել, այն ժամանակ ջրհորի

հախարակը պիտի պատրաստել շղթայով կամ թոկով  
և նրա ծալրից պիտի կախել հասարակական դույլ:  
Վոչվոքի չպիտի թուլատրել, վոր ջրհորից ջուր հանի  
սեփական գույլով, վորպեսզի վարակի մանրեն դույլի  
հետ չմանի ջրհորը:

Ջրհորի շրջապատի գետինը պիտի պիրկացնել կամ  
թե քարել, սալահատակել: Լավ և ջրհորի շուրջն այս-  
պես պատրաստել, վոր թերքածք գոլանա, վորպեսզի  
ջրհորի շուրջը թափած ջուրը հետ չթափվի ջրհոր, այլ  
հոսի հեռուները:

Զի կարելի աղտոտ ճերմակեղենը ջուր քաշել կամ  
լվանալ ջրհորի մատ: Յեվ վոչ ել կենդանիներին ջուր  
տալ ջրհորին կից, յերբեմն ջուր տալիս՝ կենդանիները  
միզում են և թրքում, վորի ժամանակ աղտոտություն-  
ների հեղուկ մասը կարող և ծծվել ջրհորը և աղտոտել  
ջուրը:

Ջրհորի մեջ չպետք ե ձգել վոչ ապախտակի կտոր, վոչ  
տաշեղ և վոչ ել գորտ կամ այլ կենդանի, ինչպես  
այդ անում են յերեխաներն իրենց զվարճության հա-  
մար: Ջրհորի մեջ չի կարելի թքել:

2) Յեթէ ջրհոր չկա, այլ ջուրը վերցնում են փոք-  
րիկ լճակից կամ գետակից, լավ և յեռացրած խմել:  
Ջուր կարելի է խմել այն ժամանակ միայն, յե-  
թե համախ բժիշկը քննում և կտնում և ջուրն ա-  
ռողջ:

3) «Ջրալին վարակիչ հիվանդությունների» հայտնը-  
ված գեպքում պիտի զգուշանալ, և ամեն տեսակի կատ-  
նաչեղեն ուտելուց առաջ յեռացրած ջրով լվանալ և  
կապել: Կովկիթն ու առհասարակ կաթի բոլոր աման-  
յեռացրած ջրով:

4) Յեթե կոլխոզնիկներից մեկն ու մեկը հիվանդա-  
նա, նրան պետք ե տեղավորել մերձակա հիվանդանո-  
ցում. քանի նա հիվանդանոց չի տեղափոխված, խնամ-  
քի համար միավոր մի մարդ պիտի նշանակել: Հիվան-  
դապահը մաքուր և պահելու իրեն և ձեռքերն ել հա-  
մախ և լվալու, վորպեսզի թե ինքը չվարակվի և թե  
վարակը չտարածի շրջապատում: Մեզը և հիվանդի  
արտաթորությունները պիտի հավաքել առանձին գար-  
շոկի մեջ և վրան ածել անեփ կիր, ապա բնակարանից  
հեռու փոսո փորել և դատարկել մեջը:

5) Հարկավոր ե ճանճերի զեմ պալքարել:

Դրա համար կան բազմաթիվ միջոցներ՝ ճանճա-  
սպան, թունավոր թղթեր և զանազան ձևի թակարգներ,  
կոլխոզնիկների համար հժան կարող և նստել ճան-  
ճասպանը (մուխամոր), բայց նա թունավոր և նաև  
մարդու համար, պետք ե զգուշ լինել:

Ամենից լավն ե, վոր ճանճերին հնաբավորություն  
չտրվի բազմանալու: Արտաքնոցներն ալնպես պիտի  
կառուցել, վոր ճանճերը չկարողանան արտաթօրու-  
թիան մոտենալ: Դրա համար լավ ե, վոր նստելու  
տակառ, մեջը քիչ ջուր լցնել և  
վրան ել մի շիշ նավթ ածել և խստիվ բոլորին ել  
պատվիրել, վոր ամենքն ել կարեքի դեպքում արտաք-  
նոց գնան: Այն ժամանակ ճանճերը տեղ չեն ունենալ  
ձևուկը և բազմանալու: Աղբը պիտի հավաքել հա-  
մար գնելու և բազմանալու: Աղբը պիտի հավաքել հա-

մար գնելու և բազմանալու: Աղբը պիտի հավաքել հա-  
մար գնելու և բազմանալու: Աղբը պիտի հավաքել հա-

ներ ու Փշրանքները, Յեթի կերակուրները փակ պահվեն և Փշրանքներ ել չլինեն, ճանճերը համեստաբար քիչ կլինեն, Իսկ վորքան քիչ լինեն ճանճերը, ալնքան պակաս կլինի գարակը:

Ահա զլխավոր խորհուրդները, զորոնցով պիտի պայլքարել ջրի միջոցով տարածվող վարակիչ հիվանդությունների դեմ և պիտի պաշտպանել առողջությունը: Մատնանշենք այժմ մի քանի այլ հիվանդություններ, վորոնք կարող են վտանգ սպառնալ կոլխոզնիկներին Նրանցից իր վնասակարությամբ առաջին աեղը կարող ե բռնել սիֆիլիսը:

### Սիֆիլիս

Սիֆիլիսը մեր յերկրում բավականաշափ տարածված է: Մի քանի վայրերում սիֆիլիսով հիվանդ են շատ թվով մարդիկ: Այդ հիվանդությունը ծանր և ու վասակար, վոր զլխավորն ե, նա շատ և կաշող: Յեթե մարդ հիվանդանում և սիֆիլիսով, վարակից 2-3 շաբթից հետո մարդի վրա յերեւմ և վերք: Նա հայտնը վում և ախտեղ, վորտեղից սիֆիլիսի մանրեն (վարակը) ներս և մտել: Վերքը քիչ և անհանգուտացնում հիմնը քանի շաբաթից հետո հիվանդի մարդին ծածկում և ցանով: Հիվանդությունը այնուհետեւ զարգանում և ամեն ուղղությամբ: Բերանում, հետանցքի և սեռական գործարանների վրա յերեւմ են հատուկ ձեփ փառեր: Բերանում նրանք սպիտակ փալուն գուշնի են: Այդ փառերում վիստում են սիֆիլիսի մանրեները: Դրա համար ել սիֆիլիսով հիվանդները վտանգավոր են շրջապատի առողջ մարդկանց համար: Յեթե մեկն ապրում և սիֆիլիսով հիվանդի նաև կարող ե նրանից վարակվել:

Բայց կարելի չե սիֆիլիտիկի հետ չապրել և նորից հիվանդանալ: Յեթե սիֆիլիտիկի խմած բաժակով խմի համե առողջ մարդը, առանց նախաղես բաժակը լվա-նալու, նա յել կարող ե վարակվել:

Յեթե սիֆիլիտիկի չիրութից միաժամանակ քաշեն կամ նրա չիրջացը առ ծխախոտը ծխեն, կարելի յե սիֆիլիսով վարակվել, վորովհետև չիրութի կամ ծխախոտի վրա կվշում են սիֆիլիսի մանրեներ, վո-րոնք կարող են առողջ մարդու շրթունքի վրա անց-նել և վարակել նրան: Նույնը կարող ե տեղի ունենալ, յեթե սիֆիլիտիկի հետ ուտեն միևնույն ամանից, կամ որբեն միևնույն յերեսորբիչից և այլն:

Յերբեմն սիֆիլիսով կարելի յե վարակվել կրոնա-կան ծխախատարությաւնների ժամանակ. որինակ՝ յերբեմն յեկեղեցում շատերը թափվում են այս կամ այն խաչի կամ սրբի պատկերի վրա և համբուրում: Յեթե հավատացյալներից մեկն ու մեկը հիվանդ և սիֆիլի-սով և նրա շրթունքների վրա վերք կա, համբուրի ժամանակ նա կթողնի սիֆիլիսի մանրեներ խաչի կամ պատկերի վրա և յեթե նրանից հետո համբուրեն ա-ռողջ մարդիկ, նրանք կենթարկվեն սիֆիլիսով վա-րակվելու վտանգին: Նույն ձևով կարելի լի վարակվել նաև հազորդության ժամանակ:

